ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
Քարաձորի համայնքապետարան

N 47 19 մարտի 2020թ.

ՀՀ Լոռու մարզպետ պարոն
Ա. Խաչատրյանին

Կից ներկայացնում եմ Քարաձոր համայնքի ղեկավարի թիվ 04 և թիվ 05 որոշումները:
Առդիր 3 էջ:

Համայնքի ղեկավար՝ Հ. Ռոստոմյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Քարաձոր համայնք փողոց 1 շենք 13

ՈՐՈՇՈՒՄ թիվ 04
15 մարտի 2021 թ.

ՀՈՂԱՄԱՍԻ ՏԱՐԱՆՋԱՏՄԱՆ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 10-ի N 910-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով,

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Հաստատել ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունիսի 10-ի N 910-Ն որոշմամբ Քարաձոր համայնքին փոխանցված համայնքային սեփականություն հանդիսացող 06-109-0202-0057 ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասից տարանջատված 0,05 հա հասարակական կառուցապատման հողամասի սահմանները համաձայն սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2,ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-109-0202-0057 ծածկագրով բնակավայրերի հասարակական կառուցապատման հողամասից տարանջատված 0,05 հա հողամասը համարել առանձին գույքային միավոր:
3, Վերը նշված 0,05 հա հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
4,Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝ Քարաձոր համայնք, Լենինականի խճուղի, թիվ 2 հողամաս:
5, Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Լոռու մարզ
Քարաձոր համայնք փողոց 1 շենք 13

ՈՐՈՇՈՒՄ թիվ 05
15 մարտի 2021 թ.

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

Ղեկավարվելով "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ կետով, 60-րդ, 64-րդ հոդվածներով, Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածով, <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին և 3-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 13.11.2008 թվական <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին թիվ 1328-Ն որոշման 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2005 թվականի թիվ 2387-Ն որոշումով, հաշվի առնելով որակավորված անձի կողմից կազմված հողամասի հատակագիծը, Գեղեցիկ Կարապետյանի դիմումը և քանի որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի կազմում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին չի առաջացնում հարկադիր սերվիտուտ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-109-0001-0005 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից տարանջատված 0,1 հա հողամասի սահմանները համաձայն որակավորված անձի կողմից կազմված և սույն որոշման հավելված հանդիսացող հատակագծի:
2. ՀՀ Լոռու մարզի Քարաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող 06-109-0001-0005 ծածկագրով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամասից տարանջատված 0,1 հա հողամասը համարել առանձին գույքային միավոր:
3. 06-109-0001-0005 ծածկագրից տարանջատված 0,1 հա բնակելի տան կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը չխախտող, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1990թ. կառուցված 32,36 քմ ներքին մակերեսով բնակելի տան նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Գեղեցիկ Լեգրանի Կարապետյանի (ծնված 09.02.1967թ. Անձնագիր AM0294037 տրվ.11.05.2011թ. 018 -ից) սեփականության իրավունքը:
4. Վերը նշված գույքի զբաղեցրած հողամասը չի գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

5. Գեղեցիկ Լեգրանի Կարապետյանի սեփականությունը ճանաչված հողամասի սահմանները որոշվում են որակավորման վկայական ստացած անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հողամասի հատակագծով:
6. Անշարժ գույքին տրամադրել հետևյալ փոստային հասցեն՝ Քարաձոր համայնք, 4 -րդ փողոց, 5 տուն :
7. Սույն որոշումից ծագող իրավունքը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզի տարածքային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ